ՈՐՈՄՆԵՐ ՑՈՐԵՆԻ ՄԵՋ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՄԱՏԹԵՈՍ 13:24-30, 36-43

*Մատթեոս 13:34-35 – **34** Այս ամենը Հիսուսը ժողովրդին առակներով խոսեց. նրանց հետ առանց առակի չէր խոսում, **35** որպեսզի իրականանար մարգարեի միջոցով ասվածը. Առակներով կբացեմ իմ բերանը, կբացահայտեմ աշխարհի սկզբից ի վեր ծածկված բաները (Սաղ. 78.2):*

***24** Հիսուսը նրանց մեկ այլ առակ էլ պատմեց ու ասաց. Երկնքի արքայությունը նման է մի մարդու, որն իր արտում լավ սերմ ցանեց: **25** Երբ մարդիկ քնած էին, նրա թշնամին եկավ և ցորենի մեջ որոմ (կեղծ սերմ) ցանեց ու գնաց: **26** Երբ խոտը բուսնեց ու պտուղ տվեց, երևաց նաև որոմը: **27** Տանտիրոջ ծառաները մոտեցան նրան և ասացին. Տե՛ր, չէ՞ որ արտիդ մեջ լավ սերմ ցանեցիր: Ուրեմն այդ որոմը որտեղի՞ց է: **28** Իսկ նա ասաց նրանց. Թշնամի մարդն է դա արել: Ծառաները նրան ասացին. Հիմա ուզո՞ւմ ես՝ գնանք, դրանք քաղհանենք: **29** Նա ասաց. Ո՛չ, որոմը քաղելիս միգուցե ցորենն էլ դրանց հետ արմատախիլ անեք: **30** Թողե՛ք, որ մինչև հունձքը երկուսը միասին աճեն, և հունձքի ժամանակ հնձողներին կասեմ. Նախ որո՛մը քաղեք ու խրձե՛ր կապեք այրելու համար, իսկ ցորենը հավաքե՛ք իմ շտեմարանի մեջ:*

Մանանեխի հատիկի և թթխմորի առակը

***36** Այդ ժամանակ Հիսուսը թողեց ժողովրդին և տուն եկավ: Աշակերտները մոտեցան նրան ու ասացին. Մեկնի՛ր մեզ արտի որոմների առակը: **37** Նա պատասխանեց ու նրանց ասաց.*

(1) Լավ սերմը ցանողը Մարդու Որդին է,

*(2) **38** իսկ արտն աշխարհն է (այլ ոչ թե եկեղեցին):*

(3) Լավ սերմը նրանք են, որոնք արքայության որդիներն են,

(4) իսկ որոմը չարի որդիներն են:

*(5) **39** Թշնամին, որ այն սերմանեց, սատանան է,*

(6) հունձքն էլ աշխարհի վերջն է, իսկ հնձողները հրեշտակներն են:

*(7) **40** Արդ, ինչպես որոմը հավաքում են ու կրակով այրում, այնպես էլ աշխարհի վերջում է լինելու:*

***41** Մարդու Որդին կուղարկի իր հրեշտակներին, որոնք կհավաքեն նրա արքայությունից բոլոր գայթակղություններն ու անօրենություններ գործողներին **42** և նրանց կգցեն կրակի հնոցը. այնտեղ կլինի լաց և ատամների կրճտոց: **43** Այդ ժամանակ արդարները արեգակի պես կփայլեն իրենց Հոր արքայության մեջ: Ով որ լսելու ականջ ունի, թող լսի:*

1. ԵՐԿՈՒՍՆ ԷԼ ՏՆԿՎԵԼ ԷԻՆ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ և ԱՃԵԼ ՄԻԱՍԻՆ:

Ա Կոր. 3:9 – Որովհետև մենք Աստծու գործակիցներ ենք, դուք՝ Աստծու մշակության դաշտը, Աստծու շինությունը:

- ***Ցորենի գործերը պտղաբեր են:*** ***(Որովհետև ցորենը մեռնելու հատկություն ունի)***

  Հով. 12:24 - Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. եթէ ցորենի հատը հողի մէջ չընկնի եւ մեռնի, ինքը մինակ կմնա. բայց եթէ մեռնի, շատ պտուղ կբերէ:

  Պողոս առաքյալն ասում է «ես ամեն օր մեռնում եմ» — (Ա Կոր. 15:31, Ղուկաս 9:23)

- ***Որոմը ցորենի արտաքին տեսքն ունի:***

  Բ Տիմոթեոս 3:5 – Նրանք արտաքուստ աստվածապաշտ են, բայց աստվածապաշտության զորությունն ուրացել են. նրանցից խուսափիր:

- ***Որոմի ցուցաբերած գործը հետևյալն է՝***

  41 *Մարդու Որդին կուղարկի իր հրեշտակներին, որոնք կհավաքեն նրա արքայությունից բոլոր* ***գայթակղություններն*** *ու* ***անօրենություններ*** *գործողներին...*

  Ղուկաս 17:1-3 – Հիսուսն ասաց իր աշակերտներին. Անկարելի է, որ գայթակղություններ չգան, բայց վայ նրան, ում միջոցով կգան: Նրա համար ավելի լավ է, եթե իր պարանոցից մի երկանաքար կախվի, ու ծովը գցվի, քան թե այս փոքրերից մեկին գայթակղեցնի: Ձեր անձերի համար զգուշացեք:

  Գործք Առաքելոց 20:29-30 – Ես գիտեմ, որ իմ հեռանալուց հետո ձեր մեջ հափշտակող գայլեր կգան, որոնք հոտին չեն խնայի: Իսկ ձեր միջից դուրս կգան մարդիկ, որոնք թյուր բաներ կխոսեն, որպեսզի աշակերտներին իրենց հետևից տանեն:

  Նրանց խղճմտանքը տաղուած է.

  *1 Տիմ. 4:1-2 - **1** Եւ Հոգին հայտնի ասում է թէ վերջին ժամանակներում ոմանք հավատքից կ'հեռանան... **2** որոնց խղճմտանքը տաղուած է.*

  *Ա Տիմոթեոսին 1:18-20 – **18** Որդյակ իմ, Տիմոթեոս, այս պատվերը ավանդում եմ քեզ՝ համաձայն սկզբից քեզ համար եղած մարգարեությունների, որպեսզի դրանցով մղես բարի պատերազմը՝ **19** ունենալով հավատ ու բարի խղճմտանք, որը ոմանք մերժեցին և հավատի մեջ նավաբեկության ենթարկվեցին: **20***

Դրանցից են Հիմենեոսն ու Ալեքսանդրոսը, որոնց սատանային մատնեցի, որպեսզի սովորեն չհայհոյել:

2. ԵՐԿՈՒՍԸ ՄԻԱՍԻՆ ՀԱՍԱԿ ԱՌԱՆ, ՍԱԿԱՅՆ.

- ***Որոմներն այրեցին, իսկ ցորենը՝ ամբարեցին/հավաքեցին:***

Նախ որո՛մը քաղեք ու խրձե՛ր կապեք այրելու համար, իսկ ցորենը հավաքե՛ք իմ շտեմարանի մեջ:

Հայ. 18:4 - 4 Եւ մի ուրիշ ձայն լսեցի երկնքիցըոր ասում էր. Դուրս եկէք դորանից, ով իմ ժողովուրդ, որ մասնակից չ'լինիք դորա մեղքերին, եւ որ դորա պատուհասից չ'ընդունեք.

- ***Երեք բան, որ մենք պետք է անենք այսօր.***

1. *Որն է դաշտում իմ զբաղեցրած տեղի կարևորությունը/նշանակությունը:*

2. *Հասկանալ, որ անհնար է այս աշխարհը փոխել:*

«Աստված ինձ չի կանչել լաձակը մաքրելու. Նա ինձ կանչել է, որ այնտեղից ձուկ որսամ/բռնեմ»: - Ջ.Վերնոն Մըկգի

3. *Խնդրել Սուրբ Հոգուն մաքրի մեզ մեր կյանքի որոմներից:*

Կող. 2:6-7 - 6 Ուրեմն ինչպես ընդունեցիք Քրիստոս Հիսուսին՝ Տիրոջը, նրանով էլ ընթացե՛ք. 7 Արմատավորված և նրանով շինված, հավատի մեջ հաստատված, ինչպես որ սովորեցիք, և դրա մեջ աձե՛ք գոհություն հայտնելով:

Եբր. 12:15 - 15 Զգո՛ւյշ եղեք՝ որևէ մեկն Աստծու շնորհից չզրկվի. դառնության արմատ թող չաձի ու ոչ ոքի թող նեղություն չտա, և դրանով շատերը չպղծվե.

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: